

8416

Ա. Գուլապեան

Բուդդանի գանգաւոր

891.99

Գ-95

Թիֆլիս

1910

№ 2003


Երև.
Ս. Գ. Մ. Տ. 101

Մ. ԳՈՒԼԱԶԵԱՆ

Am-524

30

ԲՈՒՂԴԱՆԻ ԳԱՆԳԱՏԸ



Հոբին դժուխուս էրվի ու խորվի,
Օցն ու կարինը նրա ջանը կծի,
Ովոր էն բաշտան կնիկ է մոզոնի,
Ու փտակվիր մոզա է գցի:

Բուզգան



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տարածան «ԷՊՕԽՍ», Գանձակայա № 3.

1910


891.99
9-95

Արմ. Ե. ԳՈՒՂԱԶԵԱՆ
2-4771a AM-524

891.99
9-95


2-4771a

ԲՈՒՂԴԱՆԻ ԳԱՆԳԱՏԸ



Հոգին դժուխկում էրվի ու խորվի
Օցն ու կարիճը նրա ջանը կծի,
Ովոր էն բաշտան կնիկ է մօզօնի,
Ու փսակվիր մօզա է գցի:

Բուդյան



ՄԻՅ. № 22599

Թ Ի Ց Լ Ի 2

Տպարան «ԷՊՕԵԱ», Գանոսկայա № 3.

1910

ԻՐ ԽԷՉԱԽՊԷՐ

ԱՐՐԱՄ ՂԱԼԱՄԻՉ ԳՐԻՔՈՒՐՈՎԻՆ

Վրայ երկու ջեր փեջաշ է անում

ԷՍ ԳԻՐՆ ԷԷ

Նաթիկավ

45057-ա.հ.



29529-63 9.

ԱՌՐԱՄ ՂԱԼԱՄԻՉ!

«Դալլաքի ախչիկը» քիզ փեշքաշ արի,
Վուր յօրէս դէնը դիփ քիզ յիզ խօսէ,
Համա դուն դրանով դաբուլ չ'կացար,
Հերիք չի անի, էա քիչ է, կօսէ:

Չունքի անկշտուժ օմքին իս էլի,
Հիմի էլ ուրիշ բան իմ փերք արի,
Ինչօր միր քախկում մարթաթող կնիկ կայ,
Դիփունանց քիզ իմ թաւաղա տալի:

Մ. Գ.

ԲՈՒՂԴԱՆԻ ԳԱՆԳԱՏԸ

Աղիզ ախպրտիք ու իմ քվիրտիք.
Ճնդրում իմ, վուր ինձ քիչ անգաճ դնիր.
Ուղում իմ սիրտս բաց անիմ ձիզ մօզ,
Էն սիրտը, վուրին էրից իմ կընիկ:

Պիտի ձիզ պատմիմ իմ կինքի ուսման,
Թէ վունց անցկացաւ իմ յիմար գլխին.
Ու ինչկլի էսօր սրտումս պահած՝
Ամութու: վունչիչ շասեցի խալխին:

Հերիք է ինչօր մունջ էի կացած,
Հիմի դարդիրս գիփ պիտիմ ասի.
Էլ համփիբիլը աւել չիմ կանա,
Դանակը լամիս բօղազս է հասի:

Կուլի էս բանը ձիզ էլ խրատ ըլի
Ու ինձմէն մէ քիչ բան սովրիք մայնց,
Վուր դուք էլ ինձպէս չը յիմարանար
Ու ձիզ էլ շանին, ինչ արաւ նա ինձ.

Գիզիք ով էր նա, ում վրէն իմ ասումս,
 էն իմ կրնիկն էր, իմ քլէսա կրնիկ.
 Նըրա խարարնիր պիտի ձիզ պատմիմ,
 Թէ լայիղ կօնէք, անգաճ կու դնիր:

Անիծամ ըլի էն օրն ու սահաթ,
 Եփ առչի գամը ես նըրան տեսայ.
 Էրնէկ ջուխտ աճկով քօռացիլ էի,
 Վուր չէի դառի ես նըրանց փեսայ:

Խափեցի էլի, էշացայ իստակ,
 Ջուխտ վուտով մէքաշ ցիխումը ննգայ.
 Վուչ բարով միթամ բախտաուրեցի,
 Ես էլ աշխրբում տէր դառայ կնգայ:

Թէ առաչէվէթ կու իմանայի,
 Թէ ինչ լպստած օքմին էր էլամ.
 Էն հանգի էրես շանց էի տւի,
 Վուր ինըր փախչէր ինձանից ձեռամ:

Էգեղեցումն էլ գահանի առչիւ
 Վուր փսակելու ըլէինք հազրամ,
 Էնտղանց էլ մէքաշ դուս կու փախչէի,
 Վուր մնար էնդի նա լիդին պատրամ:

Ջանգամն իր գլուխը, ինչ գուզէր, անէր,
 Թէգուզ հէնց էնդի ուրիշին գթնէր,
 Թող էն սհաթն էլ փսակվէր յիզը,
 Թաք նըրա վուտը տունս շըմտնէր:

Հորին դժուխում էրվի ու խորվի,
 Օցն ու կարիճը նրա ջսնը կծի,
 Ովօր էն բաշտան կնիկ է մօգօնի
 Ու փսակվիլը մօղա է գցի:

Էլ աշխրբումը ինչ օյն ասիր,
 Վուր էն լալէպուզը գլխիս չըխաղաց.
 Սաղ քախկի համա բամբասանք շինից
 Ու թողից սիրտս էրած ու դաղած:

Համ գլուխս կտրից բարեկմերուս մօղ,
 Դիփունանց համա աճկի փուշ դառայ,
 Համ էլ մէ բանի գրօշնիր ունէի,
 Էն էլ զիփ մէտի քօռ ու փուշ արաւ:

Էլի փառք Ասծու, վուր սաղ իմ էսօր
 Ու գէղնի վրէն ման էլ իմ գալի,
 Թէ չէ քիչ մնաց լքցրած դամբաչէն
 Դէմուղէմ ճակտիս վէր էի տալի:

Իժում ում խաթիր, էրնէկ մարթ ասի,
 Գիտի խիխճ գլուխս խարար էր էլի.
 Էն գեղնի-կօպալ ջօջօի համմ,
 Վուր գլխիս էնքան օյն է բերի:

Ես գիզիմ էլի, լացատրար կուլէր
 Ու կըզլտէր մագիրը գլխին,
 Աւտաս չուրս տարի սիվիլը էր հաքի
 Ու չէր շանց տւի էրեսը խալխին:

Ըստուձ գիղենայ, ուրախութենից
 Ով գիղէ մէզլուխ մալաղնիր խաղար.
 Թէ խէշը իմն է, զօուը ես գիղիմ,
 Էն կապ կտրածին կու ճանչնամ ախար:

Դուը իմ զուրումսաղ, գլխին ասեցէք.
 Ի՛նչ կօնիս կընիկ, տօ խանի խարաք,
 Ո՛ւր իս անմիղ տիղ խաթի մէշ ննգնում
 Ու անցաւ գլխիդ ցաւ շինում եարսք:

Վախենում էի, վուը չէի պաուի,
 Ջէը քսան տարեկան թամամ էլ չէի.
 Թէ ախշկիրըը էլ չէին ճարում,
 Վուը մենակ նըրա եախից կպչէի:

Ես թէ չէ, ասինք կընիկ իս ուզում,
 Բաշուտա, ուզէ, ամա մի խափւի.
 Ջէը մէ ճանչցի ախշիկը ով է,
 Էնէնց ձեռք բունէ ու յիղը կապի:

Բարեկմիր ունիս, հարց ու փուրց արտ,
 Նրանց սովէտին էլ անպաճ գի, լսէ.
 Ումը կու ջոգին նըրանք քիղ համա,
 Էն կուլի լաւը, այ նըրան ուզէ:

Թէ չէ Ի՛նչ բան է, աշկիրը խփած
 Հէնց առչի գամը ում ռաստ իս գալի,
 Էնսաթնէվեթ շիւնքդ իս պցում
 Ու փսակվելու ձեռած խօսկ տալի:

Թէ ինչ է, կօսէ. սիրահարեցինք,
 Ես-նրանն իմ, կօսէ, ու նա էլ ի՞՞ն ա.
 Վուը չըփսակինք արա վո՛նց կուլի,
 Առանց մէկ մէկու շինք կանա գիմնա:

Բէսար ին անում, գլուխ բարն ին տալի,
 Սիրահարութիւն, լաւ բան ին գթի.
 Իրանց խիլըումն էլ մէ խէրով բան է,
 Նրա մօգօնողի գըլուխն էլ փթի:

Սփսուս էն էլի հին աղաթնիրը,
 Վուը փսակելին ծնողների ձեռով,
 Վիրչն էլ վունց մէկը չէ փոշիմանի
 Ու ինչկլի մահը պաուիլ ին սիրով:

Արա էն վուխտը ո՛վ է իմացի,
 Վուը մարթ ու կընիկ բաժնւած ըլին,
 Մէկ մէկու վըրայ աճկ էին բընի
 Ու մէկսմէկուց կնիկ ու մարթ խլին:

Հիմի կի խալխը գիփ ուրիշ հանգն ին,
 Մէկը մէկէլին հանգիստ չէ թողնում.
 Կնիկը իր մարթու ննգըունն է սիրում,
 Մարթը հարենի կնգան է գողնում:

Էնզուը էլ հիմի մարթ ու կնգուլմին
 Դառիլ է թամամ մէ ցիրկօբանա,
 Հսօր փսակելի, էքուց բաժնիլ,
 Էլ դժար բան չէ, ամեն մարթ կանա:

Կօնսիստօրիէն ամեն օր լիրն է,
էտ արուտուրով հիմի խիստ շատ ին.
Մէ օր առնում ին, մէկէլ օր ծախում,
Խան զարար կօնին, խան կու աշխատին:

էտէնց է հիմի. գուզիս փսակւի
Ու դուն էլ պիտի նրանց հանգը վարւիս,
Ու թէ չիս ուզում, վուր էտէնց ըլի,
էնչախը պիտի դիփ անկնիկ պառւիս:

էնչախն էլ թէ էս խիլքի կուլէլի,
Վուր գլխամեսը կու դընէր մտկում,
Անա էլ հիմի վունչիչ չի ըլի,
Անցկացած բանին ո՞վ ինչ է օտկում:

Խնդրում իմ բախշիք, վուր էրգէնացրի,
Ինչ անիմ, սիրտս շատ խիստ է դադած.
Գանա գլխումս էլի խիլք մնաց.
Ինչ էն կլէկածը ինձ օյն խաղաց:

էլի Աստձուն էն իմ փառք տալի,
Վուր ջալդով արի իմ գլխին շարս
Ու էն աչքակապ հօսօսալի ձեռին
Յաւիտենական գերի չդառա.

Նա խօ չէ ուզի ինձ իր մարթու տիղ,
Թուրմէ իր համա փարդա իմ էլի,
Վուր իմ անումով, իմ ֆիրմի տակը
Թարուն կանդրաբանդ ապրանք էր բերի:

Ձէ, ախպեր, էլի լաւ էժան պրծսյ,
Վուր էտ ամուլին էլ մայնց չը կերայ
Ու սաղ էս բախկում դիփունանց համա
Մատով շանց տալու մասխարա չէլայ:

Կանց խալխի մէյմունն էս էի դառի
Ու ծիծաղէին վրէս աշկարա,
Հագիր էս ուփրօ լաւ չէլաւ էսէնց,
Վուր ինքը դառաւ նըրանց մասխարա:

Գէ, գնա հիմի, վուրդի, իրն ասէ,
Թող իմն էլ էնդի լաւ միտը բերի,
Իրա կարճ խիլքով փիրը անէ, տեսնէ,
Ով ուփրօ միգմէն խելօք է էլի:

Նա հէնց գիգէ դրուտ, թէ իրա գլուխը
Մէ մինձ արմաղան ու մաթա բան է,
Վուր նըրա համա խալխը գլուխ կոտրին
Ու սրան — նրան թաւաղա անէ:

էն կի չի գիգի, վուր էսօր թէ քիչ
Մուշտարիք ունէ ու դին ին տալի,
էքուց էն հանգի դաղմէճվա կուլի,
Վուր էրեսին էլ չին մտիկ անի:

Գանա դիփունքն էլ էտէնց չին էլի,
Վուր մէկը նրանցմէն վիրջը չէ լացի,
Ո՞վ չէ անիծի իր պառուլթինը,
Ովօր էտթաւուր ճամփով է գնացի:

Թող նա էլ գնա, ձեռք չիմ բռնու՛մ,
 Իր ազիզ սրտի քէփը կատարէ.
 Օղօնդ կի ինձմէն հիռացած ըլի,
 Թէ՛զուզ քսան ու շուրս սիրեկան ճարէ:

Աստու՛ճ դուշմնիս էլ չը հանդիբեցնի
 Փիս արունի տէր, անկշտում կնգան.
 Թէ չէ վուտնիրն էլ ջնջիլով կապին,
 Նրրա օխտէմէն էլի պիտ չըգան:

Հալբաթ էտ էլ մէ հիւանդութիւն է,
 Վուր եփ կնդգեբանց ջանումն է մտնում,
 Սաղ խիլքն ու միտքը դիփ նրան ին տալի,
 Էլ ուրիշ վունչիչ լաւ բան չին գլթնում:

Էտէնց է, էտնց, դրոստ էտէնց կուլի,
 Իմ կնիկն էլ հալբաթ էտ ցաւի կուլէր.
 Էնդուր գիշիրնիր չէր թողնում քնիմ
 Ու ծամգառւծում գիփ գարթեցնում էր:

Ի՞նչ լաւ բան արի, վուր բաժնեկցի,
 Յաւիտենական յիդը չըկացայ
 Ու անիծածի հիւանդութիւնը
 Քիչ-քիչով մէբաշ ես էլ չըստացայ:

Առանց էտուրն էլ էն էլ էր հերիբ,
 Ինչ էն կեկածը ինձ էնէնց խաղցրից.
 Ինչօր անկիրս արլանդաւ արաւ
 Ու դալբ ապրանքը ինձ վրայ սաղցրից:

Գիղիմ սպասում իք իմ պատմութենին,
 Համա էլ վունչիչ չպիտի ասիմ.
 Միտքս փոխեցաւ, բողիշ իմ խնդրում
 Ու ձիւր բախշելուն ես պիտի սպասիմ:

Ի՞նչ անիմ, ասիմ, ինձ համա ամուլթ,
 Ես էլ մէ մարթ իմ, խօ էշ չիմ դարդակ.
 Մայնց թէ՛ գուպիք մէ բան իմանա,
 «Դալլարի ախշիկ» գիրք պիտի կարթար:

ՀԻՄԻ ԿՆԻԿՍ ԷՍ Է ԱՍՈՒՄ

Ժամանակի ախշիկ իմ,
 Սիրեկնիքը շատ գուզիմ.
 Վունցօր ձեռի աղուխնիր,
 Օրը մէ մէ հատ գուզիմ:

Ինձ՝ ով կանա կշտացնի,
 Ո՛վ էնքան փուղ կու ճարէ,
 Վուր իմ սրտի ուզածնիր
 Դիփ միանա կատարէ:

Զուրիք գուզիմ ռանգ է ռանդ,
 Վուտնամաննիր գիփ թանգ թանգ
 Զլապա—շլուպին էլ ինչ խօսք,
 Վուրնօր լաւ—լաւ գիղենար:

Պօրտմանս զիփ յիք ըլի,
 Ինչքան մխսիմ չհատնի.
 Քէփ անիմ ու քէփ անիմ,
 Ինչկլի սիրոս կու դաթրի:

Մէ օր ըլիմ մուշտաիթ,
 Մէ օր վէրի թաղումը,
 Մէ օր թրիատ, մէ օր ցիրկ,
 Մէ օր կարտի խաղումը:

Փայտօններով սէյր անիմ,
 Դիփ ինձ անին թամաշա
 Ու սաղ քախկի բարիշնէք
 Ինձ էրնէկ տան Համաշա:

Հարուստ մարթկանց մօդ նստիմ,
 Նըրանց սուփրի վարթ ըլիմ.
 Դիփունքը ինձ հուտ քաշին
 Ու զիփունանց դարդ ըլիմ:

Ում ջիբումը շատ ըլի,
 Ինձ իր կուռը քաշէ նա.
 Իմ պոռշների մէ պաշը
 Հարիւր մանէթ ածէնա:

Աքա էնքան ով ունէ,
 Վուր ինձ էսէնց պահէ նա.
 Ո՞վ կու զիմնա էս միխսին,
 Ում սիրտը չի վախենայ:

Էնդուր ես էլ ասում իմ.
 Միրեկները շատ դուզիմ,
 Վունցօր ձեռի աղուխներ,
 Օրը մէ—մէ հատ դուզիմ:

Լ Ի Ջ Ա

Երգինք, գեղինք, Աստուձ վկայ,
 Լիգից սիրուն ախչիկ չկայ.
 Ամէն շափաթ ու կիրազի
 Բատանիցկի բաղում գուքայ:

Չուին գօնդիկ խաղացնելով,
 Սէյր կօնէ դիվեր դէվեր.
 Ու եփ դաթրի, գնջանալու
 Իժում կեհայ ներքի խեւեր,

Ու կու տեսնէ մէ կունճուլում
 Գուչ է էկի ովօր վուրէ,
 Չի ամանչի, մօդիկ կեհայ,
 Չունքի եադ չէ, շինաուր է:

Ինքն էլ էնդի, նըրա կուխքին
 Կամաց—կամաց մօդ կու նստի.
 Կօսէ.—Վանօ, խիստ իմ դաթրի,
 Քնիլ իմ ուզում մէ քիչ էստի:

Չիմ կանացի վուաի կանգնի,
Ծնգնիրս էլ խիստ է կտրում.
Սաղ չուրս սահաթ ման իմ գալի
էս բաղոււմը, քիզ իմ պտրում:

Թէ ինձ կու սիրիս, Վանօ ջան,
Մէ քիչ էստի ինձ քնացրու,
Ա.մա շատ էրգար չթողնիս,
Գէթաղվա ջալդով վիկացրու:

Վանօն սերթուկ տակն է փրում,
Պարկեցնում է, գլուխն իր ծնգան,
Փաթաթում է, պաչ է անում,
Վունցօր մարթը իրս կնգան:

Լիզէն քաղցր էրազումն է,
Խան դէս ու դէն շուռ է գալի,
Միթամ վունչիչ չէ իմանում,
Սրտումը կի դուր է գալի:

Քէփ է անում էսէնց Լիզէն,
Իր օրիրը քաղցր է անցնում.
Լան ու վաղը ինքը գիդէ,
Ուրիշներին բան չէ հարցնում:

Ու թէ կօսին. — «Ախար, Լիզա,
Քիզ էս բանը չէ սաղ գալի:
Նա ասում է. — «էս մօղա է,
Ես էլ մօղնի իմ ժամ գալի»:

1894 թ.



H 2-47

ՀՈՅՍ Է ՏԵՍԵԼ

Դալաքի ախշիկը գինը 5 կոպ.

Գինը 5 կոպ.

Շուտով լոյս կը ածանի

ՀԻՆԳ. ԹՈՒՄԵԱՆՈՑ ՌԻՄՍԻՄԷՆ

